Ծալլայ մէկ մ’ըզքոյն սիրէ, որ լինի փորըդ գան ու խոց:

Դ.

Ա՛յ իմ մարգարտէ շարոց, որ յոտից մատանց հուր ու բոց,
Կըրակն զզքո մարն երէ, որ տարաւ երետ զքեզ այլոց.
Դատ ու դատասհան պիտէր, ի Հոռմանց տունըն ’ւ ի Հայոց,
Երթ ’ի դատաստան կանգն’ի, չըթող’ի զքեզ այլ մարդու ծոց:

Ե.

Այս աստընւորիս վերայ սէր չըկայ առանց ի զահմաթ.
Յառաջ ըզշէհըն կ’ուտեն, կու խըմեն յետեւ ըզշարպաթ.
Մանուկ մ’երեսուն տարի պարոնաց կ’անէր նա խըզմաթ,
Մեծցաւ ու պարոն եղեւ ու հասաւ ի սըրտին մուրատ:

Զ.

Խօ՛շ եար, ա՛մ, քեզի կ՛ասեմ թէ վերո՛ւ զդըռնակդ ի թաղէս.
Վերո՛ւ ալընդաշ շինէ՛, որ կըտրի ձայնիկդ յակընջէս.
Թէ չէ կու պահեմ զճամփադ, կու մորթեմ զէտ ոչխըրի պէս.
Պըտիկ մ’արունէդ խըմեմ, թող հանեն զաչերս երեսէս:

Է.

Ես երկու եար ունէի, մէկըն Հայ էր, մէկըն Ջըհուտ.
Ջէտ Հայն ի սիրել կ’առն’ի, մըտընուր Ջըհուտն ի կապուտ.
Ա՛յ իմ անօրէն Ջըհուտ, որ իմ սէրս ի քեզ չարար մուտ,
Ոչ սէրս ի քեզ մուտ արաւ, ոչ ձեռկունքս ի ծոցդ ելումուտ:

Ը.

Յայդ լեռնէդ ի վայր գացի, կանչեցի թէ՝ Ո՞ւր կայ կանանչ.
Մէկիկ մ’այլ ինձ զայն ասաց՛ Սար ու ձոր ամէնն է կանանչ.
Առաւ ի պահճան մըտաւ, ջուր կ’երթար՝ եզերն էր կանանչ.
Բացուել գոյնըզգոյն ծաղիկ ’ւ ամէնին տերեւն էր կանաչ:

Թ.

Մանուկ այն մանկանն ասեմ որ զմանակն կինըն սիրէ ոչ,
Հապա ան մանկանն ասեմ, թէ սիրէ՝ նա պարծենայ ոչ.
Կինն է ի յոռի հաւատ, որ զԳըրուն բանըն գիտէ ոչ,
Սիրէ ու «Եղբա՛յր» ձենէ ’ւ Աստուծոյ յահէն վախէ ոչ: